

1.6. Սեփականաշնորհում (մասնավորեցում)

Ըստ ՀՀ պետական գույքի կառավարման նախարարության տվյալների, ձեռնարկությունների մասնավորեցման ընթացքը 2001թ. հունվարի 1-ի դրությամբ

Սեփականաշնորհման ձևը	Գնահատված է	Կառավարության որոշմամբ հաստատված է	Ընդամենը	այդ թվում			այդ թվում՝ ըստ ճյուղերի										
				մասնավորեցման (լուծարման) ընթացքում է	մասնավորեցումը չի կայացել	մասնավորեցված է (լուծարումից հետո գույքը օտարված է)	արդյունաբերության և առևտրի	գյուղատնտեսության	քաղաքաշինության	նշակույթի	էներգետիկայի	տրանսպորտի	կապի	առողջապահության	տեղեկատվության և գրահրատարակչության	այլ ճյուղեր	Սնանկացման հետևանքով լուծարված է
1. Բաժանորդների ազատ բաժանորդագրություն, ընդամենը		1333	1319	3	200	1116	422	360	192	30	15	34	11	1	31	20	
այդ թվում՝																	
ա. դասական բաժանորդագրություն		1268	1254	3	197	1054	396	333	186	30	15	33	11	1	29	20	
բ. լուտային աճուրդ		65	65		3	62	26	27	6			1			2		
2. Ուղղակի վաճառք		153	153	2	12	139	56	38	9	6		14	1	6	4	5	
3. Գույքի վաճառք վարձակալին		195	195	1	4	190											
4. Աճուրդ		31	30		11	19	8	10				1					
5. Մրցույթ		167	165	13	90	62	11	13	18		9	7		1		3	
6. Միջազգային մրցույթ		17	17		8	9	6	1					1			1	
7. Բաժնետոմսերի վաճառք		3	2		1	1						1					
8. Պետ. բաժնեմասի վաճառք		31	8			8	1	5					2				
Ը ն դ ա մ ե ն ը	2055	1930	1889	19	326	1554	504	436	219	36	24	57	15	8	35	30	9
այդ թվում՝ 2000թ.					38	40											
Լուծարում		170				10		9								1	9
Անավարտ շինարարական օբյեկտներ			114		76	43											
այդ թվում՝ 2000թ.			16		10	6											

101

2001թ. հունվարի 1-ի դրությամբ հանրապետությունում մասնավորեցված են (այդ թվում՝ լուծարումից հետո գույքը օտարված է) 1554 կազմակերպություններ (միջին և մեծ ձեռնարկություններ), որոնցից 1116-ը մասնավորեցվել է բաժնետոմսերի ազատ բաժանորդագրությամբ:

Ըստ ՀՀ պետական գույքի կառավարման նախարարության տվյալների, ընդհանուր առմամբ, 2001թ. հունվարի 1-ի դրությամբ, մասնավորեցված կազմակերպությունների համար վճարվել է 103226860.5 հազ. դրամ, որից 39766020 հազարը՝ սերտիֆիկատով (38.7%-ը) և 63460840.5 հազարը՝ դրամով: Ընդ որում, 2000թ. մասնավորեցված կազմակերպությունների համար վճարվել է 2289812.1 հազ. դրամ:

2001թ. հունվարի 1-ի դրությամբ հանրապետությունում գնահատվել են 8286 «Փոքր» օբյեկտներ, որոնցից 1994-2000թթ. մասնավորեցված են 6849-ը կամ 82.6%-ը, այդ թվում աճուրդով, մրցույթով՝ 285 օբյեկտ (մասնավորեցվածի 4.2 %-ը): Ենթակա է վաճառքի աճուրդով, մրցույթով 190-ը և չի վաճառվել աճուրդով՝ 1042-ը:

Ըստ ՀՀ պետական գույքի կառավարման նախարարության տվյալների, 2001թ. հունվարի 1-ի դրությամբ, սեփականաշնորհված «Փոքր» օբյեկտների համար վճարվել է 26747811.4 հազ. դրամ, որից 23846500 հազարը՝ սերտիֆիկատով (89.2%-ը) և 2901311.4 հազարը՝ դրամով: Ընդ որում, 2000թ. սեփականաշնորհված «Փոքր» օբյեկտների համար վճարվել է 592552.8 հազ. դրամ:

Այսպիսով, 2001թ. հունվարի 1-ի դրությամբ հանրապետությունում մասնավորեցված **կազմակերպությունների, «Փոքր» օբյեկտների և անավարտ շինարարական օբյեկտների** համար վճարվել է ընդամենը 130484244.9 հազ.դրամ, որից 63788700.0 հազարը՝ սերտիֆիկատով (48.9%-ը) և 66695544.98 հազարը՝ դրամով: Ընդ որում, 2000թ. մասնավորեցված օբյեկտների համար վճարվել է 2895684.9 հազ. դրամ: